ՍԱՍՈՒՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԵՎ «ԿԱՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ (ՄԱՐԴԿԱՅԻՆ) ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Պետության աշխարհաքաղաքական զարգացումը» և «կայուն հասարակական (մարդկային) զարգացումը» («Sustainable Human Development») զարգացող, տեսականորեն և մեթոդաբանորեն թերմշակ կատեգորիաներ են:

Գիտական գիտելիքի կազմակերպման այս ձևերը կարևորագույն նշանակություն ունեն այնպիսի բարդ ձևերի ստեղծման համար, ինչպիսիք են՝ պետության անվտանգության հայեցակարգը, պետության զարգացման հայեցակարգը, պետության քաղաքական դոկտրինան և այլն:

Թե «պետության աշխարհաքաղաքական զարգացումը» և թե «կայուն հասարակական (մարդկային) զարգացումը» առանձնահատուկ նշանակություն ունեն ոչ միայն գիտության, այլև պետական-քաղաքական գործիչների համար, քանզի գիտական գիտելիքի կազմակերպման այս ձևերի նկատմամբ ուշադրությունը կարող է բարձրացնել ձևավորվող բարդ և դժվար կանխատեսելի գործընթացներով (նաև աշխարհաքաղաքական) բնութագրվող նոր աշխարհակարգի պայմաններում պետությունների (հատկապես զարգացման միջին և ցածր մակարդակ ունեցող) թե քաղաքականության իրականացման, թե անվտանգության ապահովման և թե ընդհանրապես պետության գործառնության արդյունավետությունը:

<u>«Պետության աշխարհաքաղաքական զարգացում» հասկացությունը:</u> «Պետության աշխարհաքաղաքական զարգացումը» աշխարհաքաղաքականության և նրա բաղադրիչ պետության աշխարհաքաղաքականության կարևորագույն կատեգորիներից է: Սակայն պետության աշխարհաքաղաքական զարգացման հետազոտության տեսական-մեթոդաբանական հիմքի ապահովման խնդիրը համապատասխան ուշադրության չի արժանացել աշխարհաքաղաքականության կողմից: Որպես սրա հիմնավորում բավական է նշել «աշխարհաքաղաքական զարգացում», «պետության աշխարհաքաղաքական զարգացում» հասկացությունների՝ աշխարհաքաղաքականության բոլոր դասագրքերի և ուսումնական ձեռնարկների հիմնական կատեգորիաների բաժիններում բացակայության փաստը:

Ըստ «Геополитика: Популярная энциклопедия»-ի (Ծ., 2002)՝ «պետության աշխարհաքաղաքական զարգացումը այս կամ այն պետության՝

իր աշխարհաքաղաքական դիրքի փոփոխմանն ուղղված պրակտիկ գործողությունների ամբողջությունն է՝ հիմնված նրան մատչելի զարգացման ռեսուրսների տարածաժամանակային կոնֆիգուրացիայի մասին գիտական գիտելիքների վրա» [3, էջ 114]:

Տվյալ դեպքում սահմանողի մեջ կան մի քանի շեշտադրումներ՝

- պետության աշխարհաքաղաքական զարգացման նպատակը աշխարհաքաղաքական դիրքի փոփոխումն է,
- պետության աշխարհաքաղաքական զարգացումը տվյալ պետության պրակտիկ գործողությունների ամբողջություն է,
- պետության աշխարհաքաղաքական զարգացումը հիմնվում է նրան մատչելի զարգացման ռեսուրսների տարածաժամանակային կոնֆիգուրացիայի և դրա մասին գիտական գիտելիքների վրա:

«Պետության աշխարհաքաղաքական զարգացման» սահմանման այս հիմնական կառուցվածքային բաղադրիչների հետ կապված անհրաժեշտ ենք համարում ներկայացնել հետևյալ դատողությունները:

- Սահմանման մեջ ակնհայտ է «զարգացում» հասկացության բովանդակության կարևոր բնութագրիչների անտեսումը: Մասնավորապես, ըստ «Философский энциклопедический словарь»-ի (Ծ., 1989)՝ «զարգացումը՝ անշրջելի, նպատակաուղղված և օրինաչափ փոփոխություններն են» [5, էջ 537], ուստի՝ միայն փոփոխմանն ուղղված գործողությունները, կարծում ենք, չեն արտահայտում «զարգացման» էությունը:
- «... պրակտիկ գործողությունները...» կարծում ենք չեն հակասում «զարգացում» հասկացության բովանդակությանը:
- Աշխարհաքաղաքական դիրքը՝ որպես աշխարհաքաղաքական զարգացման նպատակ համարելու հետ կապված անհրաժեշտ է նշել, որ «աշխարհագրական դիրք» հասկացության բովանդակությունը (մասնավորապես աշխարհաքաղաքականության մեջ) նույնացվել է տեղադիրքի հետ, որը ճիշտ չէ: Սահմանման մեջ նկատելի է աշխարհաքաղաքական դիրքի բովանդակության մեջ «հարաբերությունների» վրա առանձնահատուկ ուշադրությունը, որը ճիշտ է, սակայն միաժամանակ, «աշխարհաքաղաքական դիրքը» լինելով «աշխարհագրական դիրք» կատեգորիական համակարգի բաղադրիչ, հանդիսանում է աշխարհաքաղաքական գործոններից մեկը (պետական տարածքի որակական բնութագրիչներից մեկը): «Պետության աշխարհաքաղաքական դիրք» հասկացության մեջ «աշխարհաքաղաքական հարաբերությունների» առկայության փաստի արդյունքում է, որ «պետության աշխարհաքաղաքական դիրքը» ներթափանցում է պետության աշխարհաքաղաքականության առանձնահատուկ այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են՝ «պետության աշխարհաքաղաքական զարգացումը», «պետության աշխարհաքաղաքական

հզորությունը», «պետության աշխարհաքաղաքական ռեսուրսները» և այլն: Իսկ «պետության աշխարհաքաղաքական դիրքի» կողմից «պետության աշխարհաքաղաքական հարաբերությունների» «կլանումը» միաժամանակ մեծացնում է նրա նշանակությունը աշխարհաքաղաքականության համար ընդհանրապես և պետության աշխարհաքաղաքականության համար՝ մասնավորապես:

- «Պետության աշխարհաքաղաքական զարգացման» հետազոտության տեսական-մեթոդաբանական հիմքի ապահովման գործում կանխատեսագիտական մոտեցման մշակման ու կիրառման անհրաժեշտության և ընդհանրապես առանց գիտական գիտելիքների զարգացում ապահովելու անհնարինության գիտակցման մասին է խոսում «պետության աշխարհաքաղաքական զարգացումը» սահմանողի կառուցվածքում պետությանը հասու զարգացման ռեսուրսների տարածաժամանակային կոնֆիգուրացիայի մասին գիտական գիտելիքները որպես հիմք ունենալու անհրաժեշտության մասին դատողությունը: Առանց գիտական գիտելիքների հնարավոր չէ ապահովել «զարգացման» գլխավոր բնութագրիչ «նպատակաուղղվածությունը»: Սակայն, եթե խոսքը գնում է աշխարհաքաղաքական զարգացման մասին, ապա աստեղ ճիշտ կլիներ ռեսուրսների բարդ համակարգից առանձնացնել աշխարհաքաղաքական ռեսուրսները:

Գիտական գիտելիքի կազմակերպման այս կարևոր ձևի՝ հասկացության (կատեգորիայի) սահմանման ժամանակ կարևոր են հասկացությունների սահմանման տեսակների և սահմանումների կանոնների [1, էջ 53-96] իմացությունը, առանց որի հնարավոր չէ տեսական-մեթոդաբանական խնդիրների (այդ թվում և պետության աշխարհաքաղաքական զարգացման հետազոտության տեսական-մեթոդաբանական հիմքի ապահովման) լուծումը:

Պետության աշխարհաքաղաքական զարգացման թե սահմանման նոր տարբերակի և թե նրա հետազոտության գիտական հիմքի մշակումը հատկապես կարևոր է պետության աշխարհաքաղաքականության կառավարման գործառույթի և նրա հիմքի կանխատեսման գործառույթի արդյունավետության բարձրացման համար, ուստի այստեղ հատուկ կարևորություն ունի աշխարհաքաղաքական կանխատեսման մեթոդաբանության մշակումը և աշխարհաքաղաքական զագացման հետազոտություններում դրա կիրառումը: Մասնավորապես, այստեղ բավարար չէ որոնողական կանխատեսման ապահովումը, այլ անհրաժեշտ է և նորմատիվային կանխատեսման և ինտեգրալ կանխատեսման (որոնողականի և նորմատիվայինի ամբողջությունը) ապահովումը, իսկ սրանց համար կանխատեսման աստիճաններից հատկապես տեսական ապահովման և մեթոդական ապահովման աստիճանների ապահովումը:

Քանի որ «աշխարհաքաղաքական» կարող են լինել տարբեր բնույթի հարաբերությունները (տնտեսական, քաղաքական, սոցիալական, էքսոմշակու-

թային և այլն), ուստի «պետության աշխարհաքաղաքական զարգացում» հասկացությունը ներթափանցում է «տնտեսական զարգացում», «քաղաքական զարգացում», «սոցիալական զարգացում», «մշակութային զարգացում», «կայուն հասարակական (մարդկային) զարգացում» հասկացությունների առարկայական տիրույթ: Որպես սրա արդյունք՝ «պետության աշխարհաքաղաքական զարգացումը» կախված է «զարգացում» կատեգորիայի վերոհիշյալ բաղադրիչների մակարդակից, միաժամանակ պետության աշխարհաքաղաքական զարգացմանն ուղղված ռացիոնալ քաղաքականությունը արդյունավետ է նաև զարգացման մյուս տեսակների համար և սրանց մակարդակի բարձրացմանն ուղղված քաղաքականություն է նաև: Սա խոսում է «զարգացման» վերը նշված տեսակների հետազոտությունների արդյունքների համատեղ օգտագործման նպատակահարմարության և անհրաժեշտության մասին:

Քանի որ ժամանակակից գիտական գրականության մեջ «զարգացում» կատեգորիական համակարգի բաղադրիչներից ավելի հաճախ քննարկվում է «կայուն հասարակական (մարդկային) զարգացումը» (որի գերակայությունները ՄԱԿ-ը փորձում է կիրառել աշխարհի բոլոր երկրների նկատմամբ), փորձենք պարզել համամոլորակային առանձնահատուկ նշանակություն ունեցող «կայուն հասարակական (մարդկային) զարգացում» («Sustainable Human Development») հասկացության և «պետության աշխարհաքաղաքական զարգացման» փոխառնչությունները:

<u>«Կայուն հասարակական (մարդկային) զարգացում» հասկացությունը:</u>

Ըստ ՄԱԿ-ի Հանձնաժողովի զեկույցի «կայուն զարգացումը առաջընթացի մի մոդել է, որի ընթացքում ձեռք է բերվում ներկա սերնդի կյանքի պահանջմունքների բավարարումը առանց ապագա սերունդներին այդպիսի հնարավորություններից զրկելու: Լայն իմաստով, կայուն զարգացման ռազմավարությունն ուղղված է՝ մարդկանց միջև և հասարակության ու բնության միջև ներդաշնակության հաստատմանը» [2, էջ 199]:

Ըստ ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի մարդկային զարգացման հաշվետվության «կայուն հասարակական զարգացումը բնության, մարդկանց, նրանց բարեկեցության զարգացումն է: Նրա բարձրագույն գերակայությունը աղքատության նվազեցումն է, արդյունավետ զբաղվածությունը, սոցիալական ինտեգրացիան և շրջակա միջավայրի վերականգնումը: Կայուն հասարակական զարգացումը հենվում է արդարության վրա՝ հնարավորություն տալով բոլոր սերունդներին՝ ներկա և ապագա լավագույնս օգտագործել իրենց պոտենցիալ ընդունակությունները կյանքի բոլոր՝ տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական բնագավառներում» [4, էջ 7]:

Ըստ Կ. Ս. Դանիելյանի՝ «կայուն հասարակական զարգացումը այն զարգացումն է, որը երաշխավորում է ներկա և ապագա սերունդների ներկայա-

ցուցիչներին առավելագույնս հնարավոր հավասար ելակետային պայմաններ՝ իրենց ընդունակությունները դրսևորելու և կենսական պահանջմունքները բավարարելու համար: Այն հենվում է մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովող ժողովրդավարական հասարակությունում էկոլոգիական անվտանգության և սոցիալական արդարության սկզբունքների հետ զուգակցվող տնտեսության վրա» [4, էջ 11]:

Բոլոր սահմանումների (բնութագրումների) առանցքն այն է, որ կայուն հասարակական զարգացումը առաջնային է համարում զարգացումը, զարգացում, որը ոչ միայն ներկա սերունդների համար է, այլև ապագա, որը այդ սերունդների համար պահպանում է պահանջմունքների բավարարման, ընդունակությունների դրսևորման հնարավորությունները, զարգացում, որի դեպքում գերակայություն է համարվում առաջին հերթին էկոլոգիական անվտանգությունը և սոցիալական արդարությունը:

Առանձին սահմանումներում (բնութագրումներում) նկատելի են առանձնահատուկ կողմեր, որոնք չկան մյուսներում: Օրինակ. կայուն հասարակական զարգացման գլխավոր պայման է համարվում ժողովրդավարական քաղաքական ռեժիմը, որի պայմաններում միայն հնարավոր է ապահովել մարդու իրավունքների պաշտպանությունը: Առանձնահատուկ կողմ է նաև այն, որ զարգացումը ուղղված է մարդկանց միջև, բնության ու հասարակության միջև ներդաշնակության հաստատմանը, որը բազմաբնույթ փոխհարաբերությունների նկատմամբ ուշադրություն է հրավիրում: Հաջորդ առանձնահատուկ կողմն այն է, որ գերակայությունների շարքում առանձնանում են աղքատության նվազեցումը, սոցիալական ինտեգրացիան, արդյունավետ զբաղվածությունը:

<u>«Պետության աշխարհաքաղաքական զարգացում» և «կայուն հասարակական (մարդկային) զարգացում» հասկացությունների նմանություններն ու տարբերությունները:</u>

Հաշվի առնելով «պետության աշխարհաքաղաքական զարգացում» և «կայուն հասարակական (մարդկային) զարգացում» հասկացությունների մասին վերոհիշյալ դատողությունները, կարևոր ենք համարում առանձնացնել սրանց հետևյալ հիմնական նմանությունները.

- այս երկու հասկացությունները տեսականորեն և մեթոդաբանորն թերմշակ են,
- երկուսի համար բոլորի կողմից ընդունված սահմանում չկա և սրանց սահմանումների նոր տարբերակների առաջարկումը արդիական խնդիր է,
- երկու կատեգորիաներն էլ ունեն թե գիտական և թե գործնական մեծ նշանակություն, սրանց հետազոտությունների արդյունքների արժանահավատության աստիճանից է կախված գիտության ինչպես ճանաչողական, այնպես էլ կանխատեսման և կառավարման գործառույթների կատարման արդյու-

նավետությունը, պետության ինչպես արտաքին, այնպես էլ ներքին հիմնական գործառույթների կատարմանը գիտական արդյունավետ օժանդակության հնարավորությունների մեծացումը,

- երկուսն էլ հասարակության (պետության) քաղաքական նպատակների բնութագիր են,

- երկուսն էլ ընդգրկում են մարդու գործունեության տարբեր ոլորտները,

- երկու կատեգորիաներն էլ մեծ նշանակություն են տալիս անվտանգությանը,

- երկուսն էլ շեշտում են կանխատեսագիտական մոտեցման մշակման և կիրառման անհրաժեշտությունը:

Սրանց հիմնական տարբերություններն են՝

- «պետության աշխարհաքաղաքական զարգացումը» պետության համար է, իսկ «կայուն հասարակական (մարդկային) զարգացումը»՝ հասարակության,

- ի տարբերություն «պետության աշխարհաքաղաքական զարգացման», «կայուն հասարակական զարգացումը» առանցքային է համարում կայուն զարգացումը՝ մոտակա ապագայում զարգացման հեռանկարների պահպանումն ու ընդլայնումը,

- «կայուն հասարակական (մարդկային) զարգացումը» հիմքում դնում է հատկապես էկոլոգիական անվտանգությունը, «պետության աշխարհաքաղաքական զարգացումը»՝ աշխարհաքաղաքական անվտանգությունը:

<u>«Պետության աշխարհաքաղաքական զարգացում» և «կայուն հասարակական (մարդկային) զարգացում» հասկացությունների առաջարկվող սահմանումներ</u>:

Փորձենք սահմանել վերոհիշյալ հասկացությունները, հիմք ընդունելով՝

- հասկացությունների սահմանումներին ներկայացվող պահանջները [1, էջ 77-91],

- «կայուն հասարակական (մարդկային) զարգացում» հասկացության մասին պատկերացումները,

- «զարգացում» հասկացության մասին տարածված պատկերացումները [5, էջ 537],

- զարգացման (նաև աշխարհաքաղաքական) համար ռեսուրսները որակապես և քանակապես ավելացնելով հզորության վերածելու կարևորությունը:

<u>Կայուն հասարակական (մարդկային) զարգացումը</u>՝ մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովող ժողովրդավարական հասարակու-

թյունում էկոլոգիական անվտանգության և սոցիալական արդարության սկզբունքների հետ զուգակցվող տնտեսության վրա հենվող մարդկային ռեսուրսների տնտեսական և սոցիալական օրինաչափ փոփոխությունների համակարգ է, որը լուծելով ներկա և ապագա սերունդների ընդունակությունների դրսևորման և պահանջմունքների բավարարման պայմանների բարելավման խնդիրը՝ հանգում է կյանքի որակի բարձրացմանը:

Պետության աշխարհաքաղաքական զարգացումը պետության աշխարհաքաղաքական ռեսուրսները որակապես և քանակապես ավելացնելով՝ աշխարհաքաղաքական հզորության վերածող, դրա մակարդակը բարձրացնող և պետության աշխարհաքաղաքական անվտանգության ապահովման սկզբունքը հիմք ընդունող փոփոխություններն են:

Պետության աշխարհաքաղաքական զարգացումը պետության ինքնիշխանության և գերիշխանության համար արդյունավետ պայքար է, աշխարհաքաղաքական տարածարջանում և ընդհանրապես համամոլորակային աշխարհաքաղաքական տարածությունում աշխարհաքաղաքական արդյունավետ մրցակցության գործընթաց:

Պետության աշխարհաքաղաքականություն գիտության ծյուղի զարգացման գործընթացը պետության աշխարհաքաղաքական զարգացման գիտական հիմքի ապահովման գործընթաց է, պետության աշխարհաքաղաքական ինտեգրալ կանխատեսման մեթոդաբանության մշակման և դրա հիմքի վրա պետությունների ինտեգրալ աշխարհաքաղաքական կանխատեսման գործընթաց:

«Պետության աշխարհաքաղաքական զարգացում» և «կայուն հասարակական (մարդկային) զարգացում» հասկացությունները կարող են կարևոր դեր խաղալ հատկապես սեկյուրիտոլոգիայի (կենսագործունեության անվտանգության մասին գիտության) զարգացման գործում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բրուտյան Գ. Ա. Տրամաբանության դասընթաց: Դասագիրք բուհերի համար / [Խմբ.՝ Ռ. Զ. Ջիջյան և ուրիշ.], Երևանի պետ. համալս. 4-րդ վերամշ. և լրաց. հրատ., Եր., 1987

2. Սարիբեկյան Ս. Լ. «Կյանքի որակ» և «կայուն հասարակական զարգացում» հասկացությունների փոխառնչությունների հարցի շուրջ // Կանթեղ 6: Գիտական հոդվածների ժողովածու. - Գիրք 6, Եր., 2001

3. Геополитика: Популярная энциклопедия. Авторы сост. **В. Баришполец, Д. Баришполец, В. Манилов**. Под общей ред. **В. Манилова**. М., 2002.

4. **Даниелян К. С.** Индикаторы устойчивого развития. В кн.: К устойчивому развитию Армении. Том I. Основополагающие материалы и опыт развитых стран. Ер., 1999.

5. Философский энциклопедический словарь. 2-е издание. Ред. колл. **С. С. Аверинцев, Э. А. Араб-оглы, Л. Ю. Ильичев, С. М. Ковалев и** др. М., 1989.